ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ. Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.). *Երևան, ՀՅԴ հրատ., 2005, 363 էջ:*

Վերջին 10–15 տարիներին, Հայաստանի անկախ պետականության հաստատման բերումով, խիստ մեծացել է հետաքրքրությունը հայոց նորագույն պատմության, մասնավորապես 1918–1920 թթ. Առաջին հանրապետության պատմության հիմնահարցերի գիտական ուսումնասիրության նկատմամբ: Դա պայմանավորված է երկու կարևոր հանգամանքով. նախ՝ ճանաչել անցյալը, ամփոփել Հայաստանի առաջին հանրապետության գործունեության արդյունքներն ու փորձը և երկրորդ՝ այդ փորձից բխող դասերը պիտանի դարձնել, ծառայության բերել այսօրվա պետականության կազմավորման ու ամրապնդման գործին:

Հիմնախնդիրների ուսումնասիրման բնագավառում նշանակալի է եղել սփյուռքահայ հուշագրության և պատմագրության դերը (Հ. Քաջազնունի, Ս. Վրացյան, Ալ. Խատիսյան, Ռ. Հովհաննիսյան և ուրիշներ): Ինչ վերաբերում է բուն Հայաստանի պատմաբաններին, ապա նրանց գործունեությունը հասկանալի պատճառներով ծավալվել է միայն վերջին շրջանում: Այդ ուղղությամբ առաջին հիմնավոր քայլեր կատարողներից է գրախոսվող մենագրության հեղինակ, պատմական գիտությունների դոկտոր Արարատ Հակոբյանը:

Ա. Հակոբյանի մենագրությունը նվիրված է հայ պատմագրության մեջ մինչև օրս մասնագիտորեն չուսումնասիրված, գիտական և արդիական կարևոր նշանակություն ունեցող հիմնահարցի՝ Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի և դրա հետ կապված հայ քաղաքական կուսակցությունների գիտական պատմությանը:

Աշխատությունը շարադրելիս մեթոդաբանական հիմք է ընդունված պատմական ճշմարտությունը և անկողմնակալությունը, իսկ օգտագործված սկզբնաղբյուրների և այլ նյութերի հանդեպ հանդես է բերված քննական, պատմահամեմատական ու վերլուծական մոտեցում:

Աշխատության կառուցվածքն անթերի է: Այն բաղկացած է ութ գլխից: Շարադրանքը սկսվում է հայ իրականության մեջ պառլամենտարիզմի սկզբնավորումից և ավարտվում Հայաստանի առաջին հանրապետության անկումով ու հայ քաղաքական կուսակցությունների լուծարումով:

Մենագրության մեջ արխիվային նորահայտ նյութերի, ժամանակաշրջանի հարուստ մամուլի, հուշագրությունների և այլաբնույթ տպագիր սկզբնաղբյուրների հիման վրա համակարգված լուսաբանված է Հայաստանի առաջին խորհրդարանի ձևավորման, նրա օրինաստեղծ գործունեության, միջկուսակցական-խմբակցային պայքարի, պետահիրավական ու քաղաքական մյուս կառույցների հետ նրա փոխհարաբերությունների ողջ համապատկերը: Մասնավորապես հետազոտված են խորհրդարանի օրենսդրական և ոչ օրենսդրական գործունեության հիմնահարցերի լայն շրջանակ՝ արդարադատության, դատարանակազմության, ինքնավարությունների, ֆինանսավարկային, բյուջետային, հողային, գաղթականության, խնամատարության, ներգաղթի, բանակի, արտաքին ոլորտի, սոցիալական պաշտպանվածության, տնտեսական վերաշինության, կրթության, արտախորհրդարանական և այլ հարցերը: Ընդ որում՝ հիմնական գծերով ներկայացված ու բնութագրված են ոչ միայն երկու գումարման խորհրդարանների ընդունած 300-ից ավելի օրենքներն ու որոշումները, այլև, ըստ հնարավորին, դրանք դիտարկված են կիրառության մեջ:

Աշխատության արժանիքներից է այն, որ Ա. Հակոբյանը հայ պատմագրության

մեջ առաջին անգամ հաջողված փորձ է կատարել՝ խմբավորել ու տիպաբանել հանրապետության ընդհանուր թվով շուրջ 10-ի հասնող խորհրդարանական և ոչ խորհրդարանական կուսակցությունները՝ ըստ դրանց գաղափարախոսության, ծրագրային հիմնադրույթների, քաղաքական ուղղվածության, մարտավարության և այլն:

Ա. Հակոբյանը, ուսումնասիրության հիմնական առարկա դարձնելով խորհրդարանը և կուսակցությունները, չի սահմանափակվել այդ երկու ոլորտներով: Ըստ անհրաժեշտության՝ նա լուսաբանել է նաև կառավարության գործունեությունը, դատական համակարգը, ներքին ու արտաքին քաղաքականության խնդիրները և այլ հարցեր՝ անդրադառնալով նաև արտախորհրդարանական կուսակցություններին: Այնպես որ աշխատությունն ընդգրկում և լուսաբանում է ավելի շատ հարցեր, քան հուշում է աշխատության վերնագիրը:

Նորույթ է այն, որ քաղաքական կուսակցությունների գործունեությունը գնահատելիս Ա. Հակոբյանը հիմնավոր ու համոզիչ փաստերով զարգացրել է այն միտքը, որ գաղափարական տեսակետից հայ քաղաքական կուսակցությունները չեն եղել ինչ-որ միաձույլ և ամորֆ կազմակերպություն, այլ, որպես կանոն, դրանց ներսում գոյություն են ունեցել փափուկ ու կոշտ դիրքորոշման, չափավոր և ծայրահեղ մարտավարության, տարբեր մոտեցումների ու հայեցակետերի տեր խմբեր ու հոսանքներ:

Աշխատության մեջ կարմիր թելի պես անցնում է անկախ պետականության գաղափարը: Եվ այս իմաստով՝ Ա. Հակոբյանը հայ քաղաքական կուսակցությունների գործունեության գնահատման չափանիշ է համարում ոչ թե դրանց տնտեսական ու սոցիալական ծրագրերը և ուղղվածությունը, այլ դրանց կողմից անկախ պետականության գաղափարի պաշտպանությունը:

Ուշագրավ է, որ ուսումնասիրության արդյունքում հեղինակը պատմության փորձի ու դասերի առումով հանգել է ուսանելի այն եզրահանգման, որ արտաքին և ներքին մեծ վտանգների ժամանակ հայ քաղաքական գրեթե բոլոր ուժերը համախմբվում էին, իսկ վտանգը թուլանալու կամ վերանալու դեպքում կրկին ուժեղանում էր ընդդիմությունը և ներքաղաքական պայքարը դրանց միջև:

Հայաստանի խորհրդարանի, կառավարության, կուսակցությունների և այլ քաղաքական ու պետաիրավական կառույցների փոխհարաբերությունների ուսումնասիրության հիման վրա հեղինակին հաջողվել է որոշել ՀՀ պետականության ձևն ու կառուցվածքը, միջազգային իրավունքի չափանիշներին համապատասխանության աստիճանը, նրա ժողովրդավարության մակարդակն ու բնույթը և այլն: Սրանք հիմնահարցեր են, որոնք պատմական փորձի ու դասերի առումով, անտարակույս, ունեն գիտագործնական և արդիական նշանակություն Հայաստանի ներկայիս՝ երրորդ հանրապետության պետաիրավական ու քաղաքական կառույցների ձևավորման, ամրակայման և զարգացման գործում: Քննելով ու վերլուծելով երկրորդ խորհրդարանի օրենսդրական գործունեությունը՝ Ա. Հակոբյանը հանգել է այն հետևության, որ իր կարճատև գոյության ընթացքում այն չհաջողեց մշակել և ընդունել ժողովրդավարական բովանդակությամբ ամբողջական օրենսդրություն, որի պատճառով էլ հանրապետության իրավաքաղաքական հիմքերը այնքան էլ ամուր չգտնվեցին: Այդուհանդերձ, հետազոտության արդյունքով հեղինակը հանգել է այն հետևության, որ Հայաստանը պառլամենտական գերակայության հանրապետություն էր, որի հիմքերը, սակայն, արտաքին ու ներքին ազդակներով աստիճանաբար խարխլվեցին: Ցույց է տրված, թե Հայաստանը ժողովրդավարության տեսակետից ինչպիսի հետընթաց ապրեց, որը պայմանավորված էր մի կողմից Դաշնակցություն կուսակցության ներսում առկա անառողջ, մենիշխանական տրամադրություններով, մյուս կողմից՝ պատմաքաղաքական դեպքերի և իրադարձությունների այն իրական ու օբյեկտիվ գործընթացներով, որոնց մեջ հայտնվել էր Հայաստանը տվյալ ժամանակահատվածում:

ՀՀ ժողովրդավարության բովանդակության տեսակետից հեղինակը հանգել է այն եզրակացության, որ մինչև 1920 թ. մա-

յիսը Հայաստանը հիմնական գծերով ժողովրդավարական էր, իսկ արդեն Մայիսյան հայտնի դեպքերից հետո օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների թելադրանքով դադարեց ժողովրդավարական լինելուց: Սրանք փաստարկված և գիտականորեն հիմնավոր եզրահանգումներ են, որոնք նորույթ են հայ պատմագիտության մեջ:

Աշխատությունը զերծ չէ նաև մասնակի թերություններից: Մասնավորապես, կարծում ենք, կուսակցություններին վերաբերող առանձին բաժիններում տեղ են գտել չափից ավելի մանրամասնություններ: Կարելի է վիճարկել հեղինակի այն եզրակացությունը, թե Հայաստանին ու հայ ժողովրդին ավելի հոգեհարազատ է խորհրդարանական գերակայության հանրապետությունը (տես՝ էջ 353): Դրա հետ մեկտեղ, կարծում ենք, որ չպետք է անտեսել նախագահական կառավարման առավելությունները:

Այսպիսով, հանրագումարի բերելով Ա. Հակոբյանի մենագրության արդյունքները, վստահորեն կարելի է հաստատել, որ հայ պատմագրության մեջ ստեղծվել է բարձրարժեք և մնայուն մի աշխատություն, որը նոր խոսք է ու կարևոր ներդրում Հայաստանի առաջին հանրապետության պատմության գիտական ուսումնասիրության բնագավառում ընդհանրապես, իսկ հայ քաղաքական համակարգի՝ մասնավորապես:

ԱՍԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ